Հուսիկ Արա

Սրտի աբսուրդ

Այդքան գոռոզ մի՛ նայիր քեզնից վեր,
եթե սերս հանեմ, լոկ դու կմնաս՝
ինձնից դատարկ, որ առանց քեզ է:

Խուճուճ մազերդ տեսել եմ ջրահարսի խոպոպներ,
աղոտ մատներդ՝ ճակատագիր մեկնող աստղերի լույս,
անկապ քայլերդ բախտիս տանող ոտնահետք եմ փայփայել.
քեզ սիրել եմ, երբ չեն սիրում,
միսուարյուն եմ դարձել, երբ լքում են,
դարձել եմ քո ստվերը, որ դու լույս երևաս…
Ահավասիկ հոգիդ հարթ է ձեռքիդ ափի պես,
ներսուդուրսդ՝ միեղանակ ու հավասար,
էությունդ՝ կանոնի մեջ անտանելի, անէական,
էլ չեմ ասում ճաշակդ՝ կարճիկ, թիզուկ, ցածրարվեստ:
Փախած ծիտ ես խաղում՝ գեղցի վարքդ մատնելով.
քեզ ներշնչել ես, թե բարձր թռիչքի համար ու անհաս ես,
մինչդեռ այնքան ներքև ու ցածրինն ես, մանրիկս:
Մոռացի՛ր, որ իմ կյանքն ես եղել,
հիշի՛ր, թե քեզ ինչպես եմ ապրել:

Եթե սերս հանեմ քեզնից,
շարքային մի աղջիկ ես՝
մանրախնդիր ու կապրիզներով կանացի,

մշտօրյա, տափրնթաց ու սորուն.
էլ ի՞նչ ասեմ ինձ,
որ այդքանը գիտակցելով եմ սիրել: